ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Արմեն Ռաֆայելյան Ռումելի ԱՁ-ն ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-25/30 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
5	Գրապահարանը ամբողջությամբ (բացառությամբ հետնապատից) պետք է պատրաստված լինի լամինացված 18մմ հաստությամբ ՓՏՍ-ից, գույնը համաձայնեցնել պատվիրատուի հետ, արտաքին չափսերը՝ 820x410x2000մմ (LxԽxԲ): Գրապահարանը ունի 400մմ բարձրությամբ 5 դարակաշար, որոնցից վերևից սկսած 3-ը փակվում են եզրերը մշակված, թրծված սպիտակ, թափանցիկ 5-6 մմ հաստությամբ ապակե երկփեղկ դռներով՝ յուրաքանչյուրը 3 ծխնիներով, իսկ ներքևի 2-ը՝ լամինացված 18մմ հաստությամբ ՓՏՍ-ից երկփեղկ դռներով՝ յուրաքանչյուրը 2 ծխնիով: Բոլոր դռները պետք է ունենան մետաղական բռնակներ: Դարակները պետք է պատրաստված լինեն լամինացված 18մմ հաստության ՓՏՍ-ից, որոնց աշխատանքային հարթության եզրերը շրջափակվեն 0.8-1մմ հաստության պլաստիկե եզրաժապավենով (PVC), իսկ ոչ աշխատանքային հարթության եզրագծերը՝ 0.4-1.0մմ հաստության պլաստիկ եզրաժապավենով (PVC): Աշխատանքային հարթությունը պետք է լինի անփայլ, բաց գույնի (բացառությամբ սպիտակի): Բոլոր միացումներն իրականացնել թաքնված ամրակցումներով: Գրապահարանի հետնապատը պետք է լինի 4մմ հաստությամբ լամինացված փայտաթելային սալից (ԴՎՊ) և նույն ՓՏՍ-ի գույնի: Պահարանը ամբողջ պարագծով պետք է ունենա շրջանակաձև ոտքեր: Ոտքեր հանդիսացող, տակը դրված ուղղանկյուն հենակի արտաքին չափսերն են՝ 800x380x100մմ (LxԽxԲ), որի հատակին հպվող հատվածի եզրերի վերջնամասերին, տակից պետք է ամրացվի պլաստիկե մուգ գույնի տակդիրներ, որոնց տակի պատերի հաստությունը՝ առնվազն 8մմ է: Նշված ապրանքի չափսերի մեջ հնարավոր թույլատրելի շեղումը ±3%: Ապրանքները պետք է լինեն նոր՝ չօգտագործված: Ապրանքների տեղափոխումը, բեռնաթափումը, տեղադրումը

	և/կամ հավաքումը իրականացվում է Մատակարարի կողմից իր միջոցների հաշվին։ Երաշխիքային ժամկետ է սահմանվում 365 օր՝ հաշված Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից, երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ եկած թերությունները Մատակարարը պարտավոր է շտկել տեղում /դետալների փոխարինում/ կամ փոխարինել նորով: Մինչև մատակարարումը ներկայացված ապրանքի նմուշները համաձայնեցնել պատվիրատուի հետ: Մատակարարման օրը համաձայնեցնել պատվիրատուի հետ:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Армен Рафаелян Румелович ИП в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-25/30 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
5	